Հասցեատեր՝

«Փյունիկ ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcpyunik.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29.08.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Դավիթ Բակլաչյան
	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան
	Մալվինա Հարությունյան

Վարույթ՝	ՊԼ-016
Խախտում՝	1. «Փյունիկ» թիմի երկրպագուների կողմից 2 հրավառ նյութեր կիրառելը (Հավելված 1 Ա, 25-րդ կետ) 2. «Փյունիկ» թիմի ֆուտբոլիստ Էդգար Մալաքյանի (3539) կողմից բռնարարքը մրցակցի նկատմամբ, որի համար վերջինս հեռացվել է խաղադաշտից (Հավելված 1 Բ, 15-րդ կետ)
Առաջնություն՝	IDBank ՊԼ 2023-2024
Խաղ՝	«Ուրարտու»-«Փյունիկ» (1:1), 20.08.2023թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի՝ 400,000 ՀՀ դրամի չափով:
2. Որակազրկել «Փյունիկ» թիմի ֆուտբոլիստ Էդգար Մալաքյանին 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2023 թվականի օգոստոսի 21-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում), ինչպես նաև «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով:
3. Հանդիպման տեսագրությունը դիտելու արդյունքում ենթադրյալ կարգապահական խախտման համար կարգապահական վարույթ հարուցել «Փյունիկ» թիմի ֆուտբոլիստ Արթուր Ավագյանի նկատմամբ (Հավելված 1 Ա31 և Բ, 15-րդ կետ) և հանձնարարել ՀՖՖ կարգապահական գրասենյակին՝ ապահովել ֆուտբոլային սուբյեկտին ծանուցումը:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: